ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	գլխարկներ	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	Ծանոթություն-տվյալ ապրանքը մակնիշ չունի	«Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Կեպին կապտասև Dark Navy Blue, անջրանցիկ 100% պոլիէսթեր կտորից, տեսակարար կշիռը՝ 140 գ/մ2, ±3%, ջերմություն պահող։ Մատակարարի կողմից ներկայացվում է կտորի գույնի և բաղադրության հավաստիության վերաբերյալ փաստաթուղթ, որը տրվում է կտորը արտադրողի կողմից։ Բաղկացած է թասակից և երկարացված՝ կոշտ պլաստմասե կորացված գլխարկահովհարից։ Գլխարկահովհարի հաստությունը՝ 3մմ, իսկ երկարությունը կենտրոնական մասում 7 սմ, որի

					եզրագիծը սպիտակ կտորով մշակված: Թասակը բաղկացած է հինգ կտորից: Թասակի առաջնամասը ներսից կոշտացված է, որը ապահովում է ուղիղ և կլոր տեսք, թասակի ներսում յուրաքանչյուր կարի վրա փակցված է նեղ տեքստիլային ժապավեն, որը ապահովում է ամրություն: Թասակը միացված է գլխարկահովհարին 3սմ լայնությամբ ժապավենով, որի վրա առկա է 4 զարդակար: Հովհարի վրա կարվում է 5 զարդակար՝ իրարից 7մմ հեռավորությամբ: Ետևի աջ մասում՝ մետաղական արծաթագույն կարգավորիչ: Թասակի կենտրոնում ամրացված է կլոր կոճակ, որը միացնում է թասակը, իսկ ներսից պիտակ՝ գրված չափսը: Առջևի կենտրոնական մասում կարվում է սպիտակ թելով ասեղնագործված 4X13սմ «POLICE», իսկ ետևում 1X8սմ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ» բառերը: Գլխարկը պետք է ունենա կլոր թասակ: Ետևի բացվածքի խորությունը կենտրոնական մասում 5,5սմ-ից ոչ պակաս: Պատվիրատուն տրամադրում է հաստատված և

					կնիքված նմուշ: Ապրանքը ընդունվում է հաստատված նմուշի համաձայն: Չափսերը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Արտաքին տեսքը՝ լուսանկարին համապատասխան: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 25 հատ, որը տեղադրվում է ստվարաթղթե արկղի մեջ, յուրաքանչյուր արկղի մեջ 100 հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Պարտադիր, մատակարարի հաշվին կատարվում է լաբորատոր ստուգում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/Ա-24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
1					